

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԴԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԽՐԻՄՆ ՀԱՅՈց ՎՐԱ :

ԱԶԳԱՍԻՐ մարդուն համար փա-
փաքելի բան է իր ազգակից եղարցը
վրայ տեղեկութիւն առնելը . որչափ
հեռու ըլլան մէկմէկէ , կարծես թէ
այնչափ ալ աւելի կ'ըլլայ աս փափա-
քը . և տեղեկութիւնը առնելու ա-
տեն գրեթէ նոյն ուրախութիւնը
կ'ունենայ մարդ՝ ինչ ուրախութիւն
որ կը զգայ մէկը երբոր իր հեռաւոր
եզրօրմէն կամ զաւկէն թուղթ կ'առ-
նէ . անոր գժբաղդութեցը ինչպէս ցա-
ւակից կ'ըլլայ , ուրախութեանցը ինչ-
պէս ուրախակից . պակասութիւննե-
րուն աչք կը գոցէ , աղէկութիւննե-
րուն վրայ մեծ համարում կ'առնէ .
ռտարաց առջև կը գովէ , ազգայնոց
առջեւը կ'արդարացընէ : Յուսալով
որ անշուշտ այսպիսի գգացմունքնե-
րու պատճառ եղած են ու կ'ըլլան
միշտ ան ազգային տեղեկութիւններն
որ ատեն ատեն օրագրիս մէջ կը
դնենք , ահա աս անգամ ալ Խրիմն
Հայոց վրայ համառօտ տեղեկութիւ-
մը կուտանք :

Խրիմնեցոյ պատճառելիւնը : — Հիմա-
կուան Խրիմն Հայերը հաստատուն
աւանդութեամբ գիտեն ու միշտ կը
զուրցեն՝ թէ իրենց բուն հայրենիքը
Հայաստանի Շիրակ գաւառին Խնի
քաղաքն է . որ ատենով մեր բագրա-
տունի թագաւորներուն մայրաքա-
ղաքն էր , և հիմա աւերակ է : Ես ա-
ւանդութիւն կը հաստատեն նաև մեր
ազգային պատմիները Խիրակոս և
Վարդան . և աւելի տեղնիտեղը կը
պատմուի հին յայսմաւուրքի մը յի-
շատակարանին մէջ՝ որ հիմա նոր
Խախիթեանին քովի գեղերէն մէկուն

մէջ պահուած է ' . վասն զի կ'ըսէ .
‘ Ռեք եմք սերունդք Պալհաւու-
նեաց , ’ի մեծ թագաւորանիստ
քաղաքէն յլինւոյ , որ ’ի գաւառին
Շիրակվանու՝ տանն Շ արայեան ,
գահոյն Շագրատունեաց . զի մեծ
թագաւորանիստ քաղաքն մեր Խնի
իշխանաց և ազնուականաց էր բնա-
կութիւն . և բաց ’ի զանազան ու-
կէզօծ պալատից իւրաքանչիւրոցս՝
ունեաք նաև ’ի նմա հազար և մէկ
եկեղեցիս . . . Յետ սակաւուց ժա-
մանակաց՝ Ջարմաղան խանն լիա-
թարի առաքեալ գետպանս ’ի քա-
ղաքն յլինի , զի զբնակիցս նորին
հնազանդիցէին ինքեան . զի գլխա-
ւորքն ոչ ինչ պատախանի ետուն
նոցա , իսկ ամբոխ քաղաքին և ռա-
միկքն սպանին զգեստպանս . և զայն
տեսեալ զօրքն այլազգեաց ’ի բար-
կութիւն դրդեցան , և զքաղաքն
շուրջ պաշարեալ անթիւ զօրօք՝ ա-
ռին , և սուր ածեալ առ հասարակ
անողորմաքար կոտորեցին՝ զսակաւ
կանայս և զմանկունս թողեալ . կո-
ղպատեցին զինչս և զստացուածս ,
աւերեցին զբոլոր եկեղեցինն , քան-
դեցին զքաղաքն , եղծին և ապա-
կանեցին զփառս վայելքութեաննո-
րա . . . Եպա բազումք թողլով զոս-
կէզօծ պալատս և զծաղկաւէտ
գաշտս , զվանորայս և զեկեղեցիս
աւեր՝ չուեալ եկին որպէս փախըս-
տական ’ի յլինսարայ , որ ’ի մէջ
Հաշտարինանու և լի ազանու . ո-
մանք գնացին ’ի Շուղայ , ոմանք
’ի լի ան , և այլք ’ի լիս :

‘ Եւ որք յլինսարայ եկին՝ հրա-
ման առեալ ’ի Ծաթար խանէն
քնակեցան անդ ոչ բազում ժամա-
նակս , որ էր զայս չիր թուին ’ .
վասն զի մինչ նեղեալ եղեն ’ի
Ծաթարացն՝ դեսպան յղեն ’ի լո-
ւիմ առ իշխանն Պինիւիզաց՝ որ
բնակեր ’ի մէջ Ֆւանկիսարին

1 Տես Շառագարակութեան՝ Ելեհաստոն էր . 335 :

2 Յակ գէւան 1239 : 3 1279 :

„ Ֆեօդօսիու . ուխտ գնեն ընդ իշ-
„ խանին Ֆեօդօսիու . ելեալ՝ ի յլլի-
„ սարայէ իշխանք և ազնիւք և հա-
„ սարակ ժողովուրդք վառեալք զի-
„ նու , պատերազմելով ընդ թաաթա-
„ րացն՝ ձեխքեալ դան՝ ի ո սիմ , և
„ բնակին՝ ի լազարաթ² , և՝ ի Առոր-
„ խաթ և՝ ի կողմանս սոցա . այս եղե-
„ չով թուին³ :

“ Հայնժամ զօրացաք մեք և բազ-
„ մացաք , և շինեցաք զգիւղա և
„ զգաւառս . իշխանք և ազնուա-
„ կանք՝ ի ո արապազարէն՝ սկը-
„ սեալ մինչև՝ ի Առորխաթ և՝ ի
„ Ֆեօդօսիա՝ ի լերինս և՝ ի դաշտս
„ լի արարին վանօրէիւք և եկեղե-
„ ցեօք մինչև՝ ի Առորխաթ : Խւ շի-
„ նեցաք տունք հարիւր հազար , և
„ զեկեղեցիս հազար . և՝ ի ահէ Հո-
„ նականաց պարսպեցին՝ ի քաղաքն
„ Ֆեօդօսիա .” :

Ի՞ խօսքերէն ետքը՝ կը պատմէ յի-
շատակարանը թէ ինչպէս առին () ս-
մանցիք Վէֆէ քաղաքը , և ինչպէս
լիտիք Եմէտ փաշան խարդախու-
թեամբ սպաննեց մեր իշխաններն ու
մեծամեծները , և շատ մարդ գերի-
բրաւ ոչ միայն Վէֆէէն , հապանաւե-
լազարաթէն ու Առորզաթէն :

Արդ թէպէտ աս յիշատակարանին
պատմութէրնայելով՝ լիրիմու Հայոց
մեծ մասը Ենի քաղաքէն Եկած են ,
բայց կ'երենայ թէ ատեն ատեն
Հայաստանի ուրիշ կողմերէն ալ շատ
տնուորներ իրենց ազգակից Եղբարցը
հանգիստ վիճակը տեսնելով՝ անոնց
քով Եկած բնակած են : Ի՞ կարծիքս
ալ կը հաստատուի նոյն յիշատակա-
րանին խօսքերովն որ կ'ըսէ . “ Ո՞ծա-
„ թուին⁴՝ ի յաւերելն Քէլա-

¹ Հիմակուան Քէֆէ կամ կաֆա ըսուած քաղա-
քին հին յունական անունն էր թէոդոչոս , կամ
ինչպէս հիմա Ռուսներն ալ կը հնչեն՝ Ֆեօդօֆոս :

² Աս մեծ քաղաքին աւերակները միայն կը տես-
նուին հիմա Սուրխաթին քովք՝ որ էսի Գլուխ կը-
սուի :

³ 1330 :

⁴ Որ հիմա Գարանու կամ Խարանու կ'ըսուի :

⁵ 1602 :

„ լին զերկիրն Պարսից , բազումք՝ ի
„ յազգէ մերմէ չուեալ անտի գան՝ ի
„ Ո սիմ , ի Ֆեօդօսիա , ի ո արա-
„ պազար , ի Պաղջասարայ և՝ ի Ակօզ-
„ լով , : Կ'երենայ թէ աս է պատ-
ճառն որ ինչուան հիմայ ալ Խարասու
քաղքին թաղերէն մէկը Ենքէ Տահաւ-
լու կ'ըսուի :

Արչափ որ շատցան ու հարըստցան
լիրիմու Հայերը Ճ'ենովացւոց ժա-
մանակը և () սմանցւոց իշխանութեն-
ատենը , նոյնչափ ալ սկսան հարստա-
հարութիւն ու բռնութիւն քաշել-
իմաթարաց ձեռքէն՝ որ լիրիմու գըլ-
խաւոր բնակիչներն էին . ուստի լսե-
լով [թէ շատ Հայեր կան] Եհաստանի
մէջ , նոյնպէս Հայաստանի կողմերէն՝
և աւելի Ենիէն Եկած , մանաւանդ
Խլով , Կամենից , և Կալիցիային ու-
րիշ քաղաքները , և թէ մեծ պատիւ-
ունին Եհաստանի թագաւորներուն առ-
ջևն ու Հանգիստ և խազաղ կ'ապ-
րին , կամաց կամաց ան կողմերը
գնացին . որով լիրիմու Հայերը սկը-
սան քիչնալ . բայց աւելի քիչցուց զի-
րենք նեղութիւնն ու աղքատութիւն-
Պանպէս որ 1772⁵ երբոր Ուուս-
ները Վէֆէ քաղաքը առին՝ 3000
տուն Հայ հազիւ կար կ'ըսեն բոլոր
լիրիմու մէջ : Ուուսներն ալ 1200
տունի չափ Ուուսաստան տարին Վէֆ-
էֆէն (որ հիմա նոր Վախիթեանի
կողմերը բնակած են) . և թէպէտ ա-
նոնց մէկ մասը նորին լիրիմ դարձաւ
ու Խարասու քաղաքը բնակեցաւ ,
բայց անով ալ հիմա հազիւ 900 տուն
Հայ կը գտնուի բոլոր լիրիմու քա-
ղաքներուն մէջ . վասն զի ընդհան-
րապէս

Խարասու քաղաքը կը համրուի 350 տուն

Քէֆէ 150

Էսկի գրքը (Սուրզաթ) 150

Կէօզէվ 100

Ագմէջնա 50

Օր գափու 60

Այլեայլ քաղաքներ ու գեղեր 40

Բոլորը 900 տուն

Եմէն մէկ տունը հինգ հինգ հոգի

Համբելով՝ կ'ըլլան բոլոր Խրիմու հայ
բնակիչները 4500 հոգի:

Ծակէտ և այսպէս խումբ խումբ
բաժնուած ու ցրուած են Հայերը
Խրիմու այլեայլ քաղաքներուն մէջ,
բայց որովհետեւ իրենց ընդհանուր
սկիզբը մէկ է, և հիմայ ալ իրարու հետ
շատ վերաբերութիւներ ունին, անոր
համար ամէնուն ալ լեզուն՝ բնաւո-
րութիւն և սովորութիւնները գրեթէ
նոյն են: Ծակ որ տարբերութիւն ալ
կայ նէ՝ միայն իրենք կ'իմանան.
և զարմանք չէ. վասն զի շատ անգամ
որ և իցէ մեծամեծ քաղաքներու մէջ
ալ՝ մէկ թաղին բնակիչները մէկալ
թաղի բնակիչներէն տարբեր կըկար-
ծեն իրենք զիրենք, թէպէտ և դրսե-
ցոց առջելը իրարմէ տարբերութիւն
չունին: Աւստի մենք հոս Խրիմեցւոց
լեզուին վրայ խօսելու ատեն, ետքն
ալ իրենց սովորութիւնները ստորա-
գրելու ժամանակ՝ մէջերնին մասնա-
ւոր տարբերութիւն չենք դներ:

Լեզուն: — Հիմակուան խրիմեցի
Հայոց լեզուն ընդհանրապէս հայե-
րէն է. ընդհանրապէս հայերէն կ'ը-
սեմ, վասն զի որչափ ալ խառնուած
ըլլայ օտարազգի բառերով՝ գլխաւոր
մասը և բուն արմատը հայերէն է:
Լեզուին կազմուածքը աւելի լեհա-
ստանի ու Վաճառստանի Հայոց լե-
զուին նման է. որով մէկէն կ'իմացուի
թէ ասոնք ամէնն ալ մէկ երկրէ եկած
են ատենով: (Երինակի համար, Խրի-
մեցիք ալ լեհաստանցոց պէս եւ գիրը՝
երբեմն ալ է գիրը ինչի պէս կը հնչեն
բայերու մէջ. ուստի գիտէմ, գիտէս,
գիտենտ ըսելու տեղը՝ կ'ըսեն գիտէմ, գի-
տէս, գիտինտ, գիտէս, գիտին. նոյն-
պէս՝ չեն ըսեր բարեր էմ, բարեր էս,
հապա բարիլ էմ, բարիլ էս, բարիլ է են:

Ինչպէս շատ արեւելցի Հայեր, նոյն-
պէս ալ Խրիմեցիք, բ, գ, դ, է, չ, զ, ջ,
գրերը չափազանց կակըզըընելով՝ պ,
է, բ, ժ, ճ գրերուն պէս կը հնչեն. դր
կ'ըսեն

որ պիտի ըսեին
պերէլ բերէլ

հըն գըն
նէր գէր
դուր դուր
դնել դնել
ծան ծան
ծուր ծուր
ծերմ ծերմ
Շատ Շատ

գըն գըն
գէր գէր
դուր դուր
դնել դնել
ծան ծան
ծուր ծուր
ծերմ ծերմ
Շատ Շատ

այլն. զէրմ և այլն:
Շատ բառերու մէջէն, գիրը կը
ձգէն հնչելու ատեն. զոր օրինակ
կ'ըսեն

որ պիտի ըսեին

հար հար
հար հար
դուր դուր
կուն գոյն
դար դար

հայր հայր
հայր հայր
դուր դուր
գոյն գոյն
դար դար

ծար, և այլն. ծայր և այլն:
Բառերուն սկիզբը սաստիկ կը
հնչեն. գիրը՝ և գրին պէս. դր
կ'ըսեն

ուն ուն
ուստ ուստ

կըրդիլ և այլն. ուղրդիլ և այլն:
Խակ բառերու մէջ ո գրին պէս կը

հնչեն նաև աս ո տառը, որ շատ եր-
կրի Հայերուն ալ պակսութիւնն է:

Լեզուին կազմութեանը վրայ աս
ընդհանուր տեղեկութիւնը տալէն
ետքը, հիմա տեսնենք յստակութիւն
ու ոձը: Ինչպէս Հայաստանէն գուրս
եղած ամէն հայազգի ժողովուրդնե-
րը, այսպէս ալ Խրիմեցիք իրաւամբ
կ'արդարանան քան թէ կը մեղա-
դրուին՝ իրենց լեզուին մէջ օտարազգի
բառեր մտած ըլլալուն համար. վասն
զի այնչափ երկար ժամանակ ու այն-
չափ զանազան ազգաց մէջ բնակեր
են որ բնական կերպով գրեթէ ան-
կարելի էր որ իրենց լեզուն յստակ
մնար: Աւստի թէպէտ և շատ բառեր
կան իրենց լեզուին մէջ որ զուտ հայե-
րէն են, մանաւանդ տնական բանե-
րուն անունները, պտուղներու՝ խո-
տերու՝ ծաղկըներու անունները են,
զոր օրինակ կաղըւց, պահ մ'ալ, աղբան,
կղղակ, սալր, սամիլ, բարեղեղ, ինծաղիչ
և այլն. բայց գրեթէ լեզուին իրեք
մասին մէկը տաճկի ու թաճաճարի բառ

է : « Վանի որ Ոչուսաց իշխանութեակը մտան՝ շատ բառ ալ ուուսի լեզուէն առած են, մանաւանդ դատաստանական բառեր, եւրոպական նորելուք սովորութեանց անուններ և այլն : Խսկ լեզուին ոձը կամ բառերուն շարուածքը գրեթէ բոլորովին Պօլսեցւոց լեզուին կերպովն է, այսինքն հասարակ տաճկերէնի ոձ : Այս յատկութիւնները աւելի զգալի ընելու մոքով, Խսովպոսի առակներէն մէկը Խրիմեցիի մը շարադրել տուած հոս կը դնենք .

Այնէկ օր մը խուռապաղաները կօլին քէնարը սալէթ և կ'անին . աս ի՞նչ է մեր հալը կ'ասին . աս քանի մէկ առանց թագաւորի առանց փռավիճներէն քաշ պիտի գանք . եղան արթըն . արթցէք Դյուսէն մեղի մէկ թագաւոր մը ուզենանք : — Կ'ըլայ աձապ կ'ասին . — հէլուէթ կ'ըլայ . ի՞նչո՞ւ չիլալ : Խուռապաղաներն ին ձանըմսէն սին՝ մէկ շամաթամ կը ձգին որ փիւթիւն խուչերուն ու խագերուն ձաները պաթըրմիշ կ'անին : Դյուսն ալ տացա ազանքին մտիկ անողա կ'ըլայ, կ'ելէ իրենց մէկ թագաւոր մը կը իրէկ : Թագաւորն է՝ անգուման 3 փաթըր քիւթիւն վերէն կ'ինչնի ու ծըմմի տէյին անպէս ուժով կօլին էրեւը կ'ինի որ փիւթիւն խուռապաղաները զըվու կ'ըլան 4, վոստով կուլիսով հայրը ձուրին տակը, վորը աս ծակը վորը ան ծակը կը պահանգուին, ու ամէն մէկը իրենց ծակերուն մէջը կուկուզ արած՝ ամեն զոռլու թագաւոր ունեցանք հատէյին կը սըքլին : Խորդ 5 որ թագաւորին պօյին պօսին՝ խըլըմին խըլաքէթին խօսք չիկար կ'ասին . ծանտրութիւնն ալ անոր կօրա : Խուռապաղաներն ալ ան կալածին 6 կիսին էղիլ է որ Հարկու հարկաւորաց՝ պատիւս արժանաւորաց 7 կ'ասին . առջի պէրանը իրէնց թագաւորին էրեւը պիլէ նայելու սիրո ցին անիլ . սալթ անխատար որ վորը հէռուէն՝ վորը կապառէկ վորն ալ ձուրին տակէն դունչը անգուման ոնկած՝ մէմը ձըլթ կ'անէ կը նայի, հայրը կէնէ տակը : Վ էլուքին աշխարհ . քիս էրեւը պան կայ որ մարդուս ացքը ալըշիչ չիլայ . խուռապաղաներուն վախն ալ մէկ էրկու սահամէն կ'անցնի . մէմալ նայիս՝ մէկքանի հատը մէկ կ'ըլան, հայտեցէք հածէներ՝ թագաւորին սէյիր անելու էրթանը կ'ասին . էտեէ էտեւ եալ տանմիշ կ'ըլան 8, թափ թագաւորին քովք կ'ելին : Մէմալ ի՞նչ կը նայիս . ալզի 8 թագաւոր օլաճախը պալապան քիւթիւկ մըն է էղիլ է : Խուռապաղա-

ներուն վախը վըրտեղ կը մնայ . զավալը թագաւորին օմուլը կ'ելլին, կորիը կընսաին, վայէն աթլամիշ կ'անին . արթըն չարածները չմնալ : Էնկ ետքը՝ տապէս չիլալ ախագարներ, արիցէք մէկ անպէս թագաւոր մը ուզենանք որ պարէմ չէնքով չնորէքով պան : Հայող նորէն մէկ կույղառա մը կուռում կոչում մը կը վերցունին որ Դյուսն ալ նացա մէկ թուռնան մը կը իրէկ թագաւոր տէյին : Էնկ, ինչսատար ըլայ նէ քիւթիւկ տասածդ պաշխա, թուռնան պաշխա . այլու 1, մէկը անժամ 2 փատ, մէկալը պալապան խուռ : Ամս արի պանը նայէ որ թուռնան խուռ . պաղաներուն էրես տալէն վազ էկանը եալ էնտէ . ինչսատար խուռապաղա տեսնէ նէ՝ ան սահամը կուռցովք զարկածին պէս էրկու լօխմանէնէ կ'ուտէ . զարուպին 3 խուռապաղա, հօրուն կուռան կերակուրը խուռապաղա, իրկուանը խուռ . պաղա : Ի՞նչ էրկընցունիմ . ան ծունը կը պէրէ զավալը խուռապաղաներուն կուլիսուն որ արթըն փըշախ քէմիկէ տայսնող կ'ասին . ինչսատար ծան ունին նէ կը ձգին, կը կցին 4 աման կանչելու : Ամը ի՞նչ է ասիս նէ, պաշխա թագաւոր կ'ուզին . աս ի՞նչ է մեր քաշուծը կ'ասին . աս թագաւորը (խօսք նարա) մէզի վիրա կուլ տալու հէտ է . արթըն հալ չի մնաց վրաներս տահան . խատիր չինք որ թէկ . արան 5 գունչերս հուրէն տուս հանինք, եախուռ քիչ մը ծունչը սուսնէք . ցրնար կօլերս՝ խալսէնիք պարէմ : Անատենը վերէն ծան կուգայ տացա որ, Հազարա առաջ խելքերդ վըրտեղ էր կ'ասէ . պիրէ անինէ լընէր, տուք չէիք որ մեղի թագաւոր տուք տէյին կանչելէն կը ուս ցաւցուցիք : Ես ծէր իսամթը խօս անիմ տէյին՝ աթքազ չարին, ծէզի մէկ թագաւոր մը առի . ան ախըլտան թագաւորին խցմեթը ցիկտցաք ու վոյ վայ՝ եռվաշ 8 է ասիք . շըն . որ մէկ ուրիշ մ'ալ տուի, վայ վայ՝ սէրթ է կ'ասիք . Էյ ես ծէր էկլէնձէն իմ : Կնացէք տարա համբերցէք ու ծաներդ ծէզի քաշեցէք . չէնէ կիսցէք որ տահան գէշին կը նորէնիք ” :

Տարակոյս չկայ թէ Խրիմեցւոց մէջ ասիկէ մաքուր խոսողներ ալ շատ կը գտնուին . մանաւանդ հիմա շատ գովելի ուսումնասիրութին մը կայ հոն, որ կը ջանան օրէ օր իրենց լեզուն աւելի մաքրել : Բայց մենք նորէն առիթ կ'ունենանք ասոնց ուսումնասիրութիւնը յիշելու երբոր Խրիմեցւոց բնաւորութեանը և սովորութեանցը վըրայ խօսինք յաջորդ թերթերէն մէկուն մէջ :

1 Որուս . խորհուրդ :	6 թաթար . խօս :
2 Որուս . գէրուղին :	7 ուսուլք . լուղաւ :
3 Պարսկ . յանիարծ :	8 թաթար . վէրոյին :
4 թաթար . իւար ի՞նու .	9 ուսուլք :
նին :	10 թաթար . լուղաւ :
5 բըրուր , իւաս :	

1 թաթար . ՚ի հարիէ :	5 թաթար . ՚ի հարիէ :
ի՞նչ չունէ :	6 Որուս . ւէ ւըն :
2 Անշուծ :	7 թաթար . սյունիւն :
3 Որուս . նախաճաշնի :	սսպիճանի :
4 կը սինն :	8 թաթար . հէր :